*Republic of Armenia*
Marz Aragatsotn
Ddmasari Gyughapetaran

*Республика Армения*
Марз Арагацотн
Ддмасари Гюхапетаран

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ*
ԴԴՄԱՍԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

N 30

« 07 » դեկտեմբերի 2011թ

ՀՀ Արագածոտն մարզի մարզպետ

Պ-ն Ս. Սահակյանին

Հարգելի պ-ն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Դդմասար գյուղական համայնքի ավագանու 2011թ-ի դեկտեմբերի 2-ի թիվ 5.6.7 և դեկտեմբերի 5-ի թիվ 8 որոշումները:

Դդմասար համայնքի ղեկավար Ռ.Օսեյան

Ելք
<< Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժին
« 08 » 12 2011թ.
7-829

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԴՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Դդմասար համայնք, 3 փողոց, 2, Հեռ. 094018158

# ՈՐՈՇՈՒՄ

02 դեկտեմբերի 2011 թվականի N 5

## ԴԴՄԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 4, 7, 8, 9, 10 և 11-րդ հոդվածներով ԴԴՄԱՍԱՐ համայնքի ավագանին *որոշում է.*

Դդմասար համայնքի տարծքում սահմանել տեղակն տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հիմնակն օբեկտների համար – 20000դ
2. Մինչև 6 քմ ժամանակավոր շինությունների համար – 5000դ
3. 6 քմ և ավելի տարածք զբաղեցված ժամանակավոր շինության համար - 5000դ
4. Օբեկտների վերակառուցման համար – 1000դ
5. Հիմնական օբեկտների քանդելու համար – 5000դ
6. Համայնքի տարածքում ոգելից խմիչք և ծխախոտի վաճառքի համբար – 20000դ
7. Համայնքի տարածքում բացօթյա գազի և վառելիքի վաճառքի համար -200000դ
8. Համայնքի տարածքում գյուղմթերք վաճառելու համար 1 օրը – 100դ
9. Համայնքի տարածքում այլ ապրանքների վաճառքի համար – 30000դ
10. Համայնքի տարածքում խաղեր, հանրային սննդի օբյեկտներ, զվարճանքի օբյեկտներին ժամը 24. 00-ից հետո աշխատելու համար -500000դ
11. Համայնքի տարածքում արտաքին գովազդներ տեղադրելու համար – 250000դ

12. Համայնքի արխիվից փաստաթղթերի կրկնօրինակներ տրամադրելու համար – 2000դ
13. Համայնքի տարածքում մարդատար տաքսիների ծառայություն իրականացնելու թույլատրության համար – 10000դ:

Տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը

1. Համայնքի տարածքում շինության կամ շինության արտաքին տեսքը փոխելու աշխատանքներտ կատարելու հետ կապված, շինության ավարտը փաստագրելու համար՝ կեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցելու վճար – 3000դ
2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությքամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայության վճար – 3000դ
3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույտներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար յուրաքանչյուր մասնակցից գանձել – 1000դ:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Ալոյան Ազիզ

Խալիթյան Շարիվ

Օսեյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.Օսեյան

2011թ. դեկտեմբերի 2

գ. Դ[illegible]ար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԴՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Դդմասար համայնք, 3 փողոց, 2, Հեռ. 094 018158

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 դեկտեմբերի 2011 թվականի N 6

## ԴԴՄԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով Դդմասար համայնքի ավագանին *որոշում է.*

1. Արագածոտնի մարզի Դդմասար գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2012 թվականի համար, սահմանել 80000 դրամ:
2. Որոշումը ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Ալոյան Ազիզ

Խալիթյան Շարիկ

Օսեյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.Օսեյան

2011թ. դեկտեմբերի 2

գ. Դդմասար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԴՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Դդմասար համայնք, 3 փողոց, 2, Հեռ. 094 018158

# ՈՐՈՇՈՒՄ

02 դեկտեմբերի 2011 թվականի N 7

## ԴԴՄԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով,Դդմասար համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Դդմասար գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2. Որոշումը ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Ալոյան Ազիզ

Խալիթյան Շարիկ

Օսեյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. Օսեյան

2011թ. դեկտեմբերի 2

գ. Դդմասար

Յավելված N 1
ՅՅ Արագածոտնի մարզի Դդմասար
գյուղական համայնքի ավագանու
դեկտեմբերի 2-ի 2011թ. թիվ 7 որոշման

# ՅՅ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՅԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը 3

Աշխատակազմի հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 13

| Յաստիկի անվանումը | Յաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափ | աշխատանքային ամիսներ |
|---|---|---|---|
| Յամայնքի ղեկավար | 1 | 80000 | 12 |
| Յամայնքային ծառայության պաշտոններ | | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 64000 | 12 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 63000 | 12 |

Համայնքի ղեկավար Ռ.Օսեյան

Ավագանիներ

Ազիզ Ալոյան

Շարիկ Խալաթյան

Ժորա Օսեյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԴՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Դդմասար համայնք, 3 փողոց, 2, Հեռ. 094 018158

## ՈՐՈՇՈՒՄ

05 դեկտեմբերի 2011 թվականի N 8

## ԴԱՇՏԱԴԵՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 54-րդ և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածներով և հաշվի առնելով համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակը և նախորդ տարիների փաստացի ցուցանիշները Դդմասար համայնքի ավագանին *որոշում է*.

1. Հաստատել Դդմասար համայնքի 2012 թվականի բյուջեն համաձայն կից հավելվածների:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից;

Կողմ – 3 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Ալոյան Ազիզ

Խալիթյան Շարիվ

Օսեյան Ժորա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՕՍԵՅԱՆ

2011թ. դեկտեմբերի 5

գ. ԴԴՄԱՍԱՐ